«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 դեկտեմբերի 2017 թվականի

Համալսարանի 2017 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքների և 2018 թվականի խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Համալսարանի 2017 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքները և 2018 թվականի խնդիրները»** հարցը (զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ.Ի.Վարդանյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. 2017 թ. գիտահետազոտական աշխատանքների ծավալն, ընդհանուր առմամբ, կատարված է:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի գիտահետազոտական գործունեությունը կազմակերպվել և իրականացվել է համաձայն «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2017 թթ. գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգով» սահմանված նպատակների, իսկ 2018 թ. գիտահետազոտական գործունեության խնդիրների արծարծման համար որպես հիմք է ծառայել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2014-2018 թթ. գործունեության բարելավման գործողությունների պլանը»:

2017 թ. համալսարանում ստեղծվել է 4 գիտաուսումնական լաբորատորիա, շարունակվել են ամբիոնային 140 թեմաներով գիտահետազոտական աշխատանքների, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 6 դրամաշնորհային և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 3 գիտական ուղղություններով ծրագրերի իրականացումը:

Գիտաուսումնական լաբորատորիաներն իրականացրել են հետազոտություններ հետևյալ շրջանակներում՝ «Ֆինանսական ներգրավվածություն» (ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ Ս.Սուքիասյան), «Դրամավարկային քաղաքականություն և տնտեսական աճ» (ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Մաթևոսյան), «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» (ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Մարգարյան), «Սոցիալական հետազոտություններ» (ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ե.Մանուկյան):

2017 թ. շարունակվել է ամբիոնային 140 թեմաներով անհատական և խմբային հետազոտությունները, որոնք կատարվել են տնտեսագիտության, բնական գիտությունների, պատմության, քաղաքագիտության, փիլիսոփայության, լեզուների բնագավառներում: Ըստ նախապես մշակված ժամանակացույցի՝ գիտական

սեմինարների և շնորհանդեսների տեսքով համալսարանի ամբիոնները նեկայացրել են իրենց հետազոտությունների արդյունքները:

2017 թվականին համալսարանում կատարվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ 2 թեմա.

- «Հանրային կառավարման արդյունավետության բարձրացման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում» (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յու.Սուվարյան):
- «ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և հեռանկարները» (ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Ի.Տիգրանյան):

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսավորվել է 2 թեմա.

- «Վարչատարածքային բարեփոխումների ազդեցությունը ՀՀ տեղական ինքնակառավարման արդյունավետության վրա» (ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, դոցենտ Ռ.Հայրապետյան):
- «Դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատումը ՀՀ տնտեսության մրցունակության վրա» (ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու Ա.Թավադյան):

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ և հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի միջև համագործակցության շրջանակներում ֆինանսավորվել է մեկ թեմա՝ «Հայաստանի Հանրապետության և Բելառուսի կառուցվածքային քաղաքականության համաձայնեցումը տնտեսության իրական հատվածի արդիականացման համատեքստում» (ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Մարգարյան):

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ասպիրանտների աջակցության ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է մեկ թեմա «Աշխատուժի միջազգային միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները (ՀՀ օրինակով)» (ասպիրանտ Տ.Վարդանյան):

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի ծրագրերն իրականացվել են հետևյալ 3 գիտական ուղղություններով.

- «Կրթական գործընթացի և տեխնոլոգիաների հետազոտություններ»:
- «Տնտեսագիտական հետազոտություններ»:
- «Հանրային քաղաքականության և անվտանգության հետազոտություններ» (ծրագրի հետազոտողների կողմից մշակվել և հրատարակման է ներկայացվել «Ուղեղային կենտրոնները քաղաքական համակարգում» թեմայով ձեռնարկը):

2017 թ. նոյեմբերի 22-24-ը անցկացվել է համալսարանի 27-րդ գիտաժողովը՝ «Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով: Գիտաժողովի շրջանակներում կազմակերպվել են կլոր սեղաններ «Պարբերաշրջանային մակրոտնտեսական քաղաքականություն, ֆինանսական կարգավորում և տնտեսական աճ», «Հայաստանի նորաստեղծական համակարգի ձևավորման հիմնախնդիրները և հեռանկարները», «Փոքր և միջին ձեռնարկատիրություն: Գործունեություն: Աջակցություն», «Գնաճը և սոցիալական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արտաքին հնարավորությունները և սահմանափակումները» խորագրերով:

Հրատարակության գործընթացում են գիտաժողովի նյութերը՝ մոտ 50 մամուլ ծավալով:

2017 թ. գիտական կարևոր իրադարձություն կարելի է համարել ամռանը՝ Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանի հովանու ներքո՝ ՀՀ և ԱՀ նախարարների, համալսարանների ռեկտորների և բնագավառի մասնագետների մասնակցությամբ և ՀՊՏՀ-ի ու ԱրՊՀ-ի նախաձեռնությամբ միջազգային մակարդակի «Բարձրագույն կրթություն. հիմնախնդիրներ և հեռանկարներ» թեմայով աշխատաժողի անցկացումը Ստեփանակերտում: Աշխատաժողովը կազմակերպվել էր համաժողովի ձևաչափով և անցկացվել 3 բաժանմունքներով՝ «Բարձրագույն կրթության պետական կարգավորում և բուհերի ինքնավարություն», «Կրթության որակ», «Արժեհամակարգ»:

Հրատարակվել է աշխատաժողովի նյութերի ժողովածուն՝ 8 մամուլ ծավալով:

2017 թ. իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա հրատարակվել են 3 դասագիրք, 10 ուսումնական ձեռնարկ, 5 մենագրություն, 3 գիրք, 1 դասախոսությունների նյութեր, 369 գիտական հոդված, 16 ուսումնամեթոդական աշխատանք: Հոդվածներից 96-ը լույս են տեսել արտասահմանյան պարբերականներում:

2017 թվականին, 2016 թվականի համեմատությամբ, մոտ 14%-ով պակասել է համալսարանի գիտնական մանկավարժների, ասպիրանտների ու մագիստրանտների հրապարակումների թիվը:

Դրանց շուրջ 47%-ը բաժին է ընկել 7 ամբիոնի (մակրոէկոնոմիկայի՝ 8.8%, լեզուների՝ 8.8%, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի՝ 7.9%, կառավարման՝ 6.1%, ֆինանսների՝ 5.9%, միջազգային տնտեսական հարաբերությունների՝ 5.2%, միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման՝ 5.2%):

Համալսարանի գիտական գործունեության միջազգայնացման առումով կարևորվել են հետազոտություններն ու դասավանդումը արտասահմանյան համալսարաններում, միջազգային հրապարակումները, մասնակցությունը միջազգային գիտաժողովներին,

գիտական նստաշրջաններին և միջազգային ամսագրերի խմբագրական խորհրդի նիստերին: Համալսարանի աշխատակիցները 2017 թվականին աշխարհի շուրջ 15 երկրներում մասնակցել են գիտաժողովների: Միջազգային գիտաժողովների են մասնակցել նաև համալսարանի մագիստրանտներն ու ասպիրանտները:

2017 թվականին «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» հանդեսը, պահպանելով իր պարբերականությունը, լույս է ընծայել 4 համար՝ ընդգրկելով մեծաթիվ հեղինակների ոչ միայն հանրապետության սահմաններից, այլև արտերկրից (Շվեյցարիա, Ռուսաստանի Դաշնություն, Լեհաստան, և այլն):

«Բանբեր»-ը ներկայում ունի միջազգային խմբագրական խորհուրդ: Վերջինս ստեղծվել է ամսագրի բարձր գիտական ներուժի ապահովման նպատակով:

Միաժամանակ, գիտական խորհուրդն արձանագրում է՝ դեռևս առկա են մի շարք - խնդիրներ, որոնցից են՝

- Scopus և Web of Science շտեմարաններում համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի հրապարակումների սակավաթվությունը.
- գիտաժողովներին, գիտական սեմինարներին և կլոր սեղաններին ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի պասիվ մասնակցությունը.
- գիտական հետազոտությունների միջազգայնացման ցածր աստիճանը.
- հետազոտությունների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների պակասը.
- հիմնարար հետազոտությունների զարգացման և գիտական դպրոցների ձևավորման ոչ բավարար մակարդակը:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. **Համալսարանի 2017 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքներն ընդունել ի գիտություն:**

2. **Ի կատարումն ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների պլանի, հանձնարարել.**

1) Գիտության և ասպիրանտուրայի բաժնին՝

- մշակել և գիտական խորհրդի **2018 թ. հունվարի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել առաջարկություն գիտաուսումնական խմբերի մրցույթի անցկացման նպատակահարմարության վերաբերյալ.

- մշակել և գիտական խորհրդի **2018 թ. փետրվարի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել ՀՊՏՀ գիտության զարգացման (2018-2022 թթ.) ռազմավարություն և դրա կատարման գնահատման չափանիշների ու չափորոշիչների կառուցակարգը.
- մշակել և գիտական խորհրդի **2018 թ. մայիսի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել «Գիտական դպրոցների ստեղծման և գործունեության» կանոնակարգը.
- «Հորիզոն 2020» ծրագրի շրջանակներում հետազոտությունների ֆինանսավորման նպատակով ուժեղացնել այդ ծրագրերին մասնակցության համար ինչպես գործընկերային կապերի հաստատման, այնպես էլ գիտահետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները.
- մշակել և գիտական խորհրդի **2018 թ. հունիսի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել ՀՊՏՀ երիտասարդ գիտնականների դպրոցի կանոնակարգը և դրա գործունեության չափորոշիչների գնահատման կառուցակարգը.
- մշակել և գիտական խորհրդի **2018 թ. հոկտեմբերի** նիստի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել «ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և հրապարակման ակտիվության որակական գնահատման» կանոնակարգը.
- կազմակերպել ամբիոնների կողմից ներկայացված գիտահետազոտական թեմաների անհատական և խմբային շնորհանդեսներ ըստ սահմանված ժամանակացույցի և գիտական խորհրդի **2019 թ. հունվարի** նիստին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն կատարված աշխատանքների և ստացված արդյունքների վերաբերյալ:

2) Ֆակուլտետներին, ամբիոններին, գիտության և ասպիրանտուրայի բաժնին, գիտաուսումնական լաբորատորիաներին, «Ամբերդ» հետազոտական կենտրոնին՝

- հստակեցնել և ակտիվացնել գիտաուսումնական լաբորատորիաների թեմատիկ ուղղություններն ու գիտական հրապարակումները.
- ֆակուլտետների խորհուրդներում պարբերաբար քննարկել պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության ակտիվացմանը վերաբերող հարցեր.
- ապահովել ամբիոնների գիտահետազոտական ակտիվությունը և պարբերաբար թարմացնել ամբիոնների անհատական և խմբային հետազոտությունների թեմատիկան.

– ապահովել ամբիոնային հետազոտությունների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և թեկնածուական ատենախոսությունների թեմաների համապատասխանությունը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին, գիտության գերակա ուղղություններին, համալսարանի, ինչպես նաև արտասահմանյան գլխավոր հետազոտական ուղղություններին.
– գիտաուսումնական լաբորատորիաների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացնել համատեղ միջազգային հետազոտություններ արտասահմանյան բուհերի և հետազոտական կենտրոնների հետ.
– ապահովել ամբիոնի աշխատակիցների ակտիվ մասնակցությունը համալսարանում անցկացվող գիտաժողովներին, կլոր սեղաններին.
– ապահովել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտությունների արդյունքների հրապարակումների տարածումը շահառուների շրջանում:

3. 2018 թ. առաջնահերթ խնդիրներ համարել.

1) Գիտական դպրոցների ձևավորման ուղղությամբ աշխատանքների նախապատրաստումը, գիտաուսումնական խմբերի գործունեության արդյունավետության բարձրացումը՝ որպես գիտական դպրոցների ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալ:
2) Ներքին և արտաքին դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության ընդլայնումը:
3) Հայաստանյան և միջազգային համաժողովներին ու գիտական նստաշրջաններին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և ուսանողների մասնակցության ընդլայնումը:
4) ՀՊՏՀ երիտասարդ գիտնականների դպրոցի ստեղծումը:
5) Վեբ օֆ սայնսի (Web of Science), Գուգլ սքոլարի (Google Scholar) և Սկոպուսի (Scopus) տվյալների բազայում ներառված հրատարակություններում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հրապարակումների ծավալի մեծացումը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Ի.Վարդանյանին:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝ **Պ. Ա. Քալանթարյան**

08.12.2017 թ.